ՀՀ քաղաքաշինության կոմիտեն հայտարարում է արտաքին մրցույթ Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի (ծածկագիրը՝ 65-27.1-Ղ3-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի (ծածկագիրը՝ 65-27.1-Ղ3-1) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակը կցվում է:

Աշխատավայրը՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները դիմումները ներկայացնում են առցանց http://cso.gov.am/internal-external-competitions հղումով՝ մինչև **2024 թվականի դեկտեմբերի 27-ը՝ ժամը 24:00-ը ներառյալ:**

Անհրաժեշտ է կցել հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (առցանց),

2. անձնագրի և/կամ նույնականացման քարտի՝ լուսապատճեն (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի կցում, ապա անհրաժեշտ է կցել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանքի կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանքի լուսապատճենը),

3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի(երի) լուսապատճեն(ները),

4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթերի լուսապատճեն,

5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի լուսապատճեն,

6. մեկ լուսանկար՝ 3X4 չափսի:

- Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2025 թվականի փետրվարի 5-ին՝ ժամը 11:00-ին, Քաղաքաշինության կոմիտեում (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3):
- Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2025 թվականի փետրվարի 7-ին՝ ժամը 15:00-ին, Քաղաքաշինության կոմիտեում (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը **391 040** (երեք հարյուր իննսունմեկ հազար քառասուն) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ

ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ՝ 5, 33-34, 49-51, 57, 86, 118-122, 146-161
Հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510

ՀՀ Հողային օրենսգիրք, հոդվածներ՝ 1-5, 10-12, 36, 61-74, 109-112
Հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172330

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, հոդվածներ՝ 151-153
Հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=199762

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդվածներ՝ 2, 9-20, 28-30, 33-34
Հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=187324

«Քաղաքաշինության մասին» օրենք, հոդվածներ՝ 1-30
Հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=195593

«Քաղաքացիական ծառայության մասին» օրենք, հոդվածներ՝ 4-10, 13, 19, 20, 34, 36
Հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=193796

«Ճարտարապետական գործունեության մասին» օրենք, հոդվածներ՝ 1-25
Հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=138919

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենք, հոդվածներ՝ 1, 3-5, 8-14, 22, 30-31
Հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=198013

«Գրավոր խոսք», Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012 թ., էջեր՝ 71-74, 84, 85
Հղումը՝ http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf

Ինֆորմատիկա 7-րդ դասարան, Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Երևան 2012, էջեր՝ 10, 12, 30, 54
Հղումը՝ http://fliphtml5.com/fumf/egdx

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ

- «Խնդրի լուծում» կոմպետենցիա,

Հղումը՝ **https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf**

- «Բարեվարքություն» կոմպետենցիա,

Հղումը՝ **https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/3.pdf**

- «Որոշումների կայացում» կոմպետենցիա,

Հղումը՝ **https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/7.pdf**

- «Աշխատակազմի կառավարում» կոմպետենցիա,

Հղումը՝ **https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/1.pdf**

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Քաղաքաշինության կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ք. Երևան, Հանրապետության

Հրապարակ, Կառավարական տուն 3, հեռախոսահամար՝ 011 621 768, էլեկտրոնային փոստի հասցե՝ **g.grigoryan@minurban.am**):

Հավելված N 2
Քաղաքաշինության կոմիտեի գլխավոր
քարտուղարի
2020 թ. մարտի 12-ի N 88-Ա/4 հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1.Ընդհանուր դրույթներ
1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը Քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ճարտարապետության և քաղաքաշինության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 65-27.1-Ղ3-1) **1.2 Ենթակա և հաշվետու է** Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Կոմիտեի նախագահին: **1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ** Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության բաժինների պետերը: **1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները** Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության բաժինների պետերից մեկը: **1.5 Աշխատավայրը** Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3
2.Պաշտոնի բնութագիրը **2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները** 1. Ապահովում է ճարտարապետության և քաղաքաշինության բնագավառի պետական քաղաքականության հիմնադրույթների, բնագավառի զարգացումն ապահովող գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները, իրականացնում է իրավական ակտերի կիրառման պրակտիկայի ընդհանրացում, սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացնում դրանց կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ, նպատակային ու հատուկ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի և հայեցակարգերի մշակման աշխատանքները: 2. Ապահովում է Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրի բարելավմանը և ներդրումային նախաձեռնությունների խրախուսմանն ուղղված ծրագրերի մշակումը, համակարգում է կառուցապատման թույլտվությունների տրամադրման ընթացակարգերի կատարելագործման և դրանց կիրառման մեխանիզմների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը: 3. Ապահովում է բնակավայրերի պատմաճարտարապետական միջավայրի քաղաքաշինական վերականգնման ու զարգացման ծրագրերի մշակման աշխատանքները: 4. Ապահովում է քաղաքաշինական հատուկ կարգավորման օբյեկտների զարգացման ծրագրերի մշակման աշխատանքները, առաջարկություններ է ներկայացնում այդ օբյեկտների

տարածքների առանձնացման և դրանցում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգի վերաբերյալ:

5. Ապահովում է քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների քաղաքաշինական զարգացման և կառուցապատման ներդրումային հայեցակարգերի, կառուցապատման սխեմաների, հատուկ կարգավորման օբյեկտների սահմանների նկարագրի, հողահատկացման առաջարկությունների, առանձին օբյեկտների կամ համալիրների ճարտարապետահատակագծային առաջադրանքների և նախագծերի ճարտարապետական մասի էսքիզային լուծումների վերաբերյալ համապատասխան եզրակացության ներկայացման ընթացքը:

6. Ապահովում է ՀՀ տարաբնակեցման և տարածքային կազմակերպման գլխավոր հատակագծման նախագծերի (ազգայինմակարդակ) և Հայաստանի Հանրապետության մարզերի (տարածքային/ռեգիոնալմակարդակ), ինչպես նաև մեկից ավելի համայնքների տարածքներ ընդգրկող (միկրոռեգիոնալմակարդակ) տարածքային հատակագծման նախագծերի մշակման ապահովման և այդ նախագծերի հաստատումից հետո դրանց իրականացման մոնիթորինգի աշխատանքները:

7. Ապահովում է քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն, գործառական այլ համա-կարգերի տարածքային կազմակերպման, ինչպես նաև արտադրական կարողությունների, ինժեներական, տրանսպորտային, կոմունալ և սոցիալական ենթակառուցվածքների տեղաբաշխման, պատմամշակութային ու բնության հատուկ պահպանվող տարածքներ ներառող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

8. Ապահովում է քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում ներդրումային կառուցապատման ծրագրերի մշակման աշխատանքները և աջակցում դրանց իրականացմանը:

9. Ապահովում է ճարտարապետության և քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման և միջազգային ստանդարտներին դրանց համապատասխանեցման աշխատանքները:

10. Ապահովում է տեղական ինքնակառավարման մարմիններին ճարտարապետության բնագավառի մասնագիտական խորհրդատվության տրամադրման աշխատանքները և օժանդակում է բնագավառին առնչվող խնդիրների լուծմանը:

11. Ապահովում է քաղաքաշինական տեղեկատվական համակարգի ձևավորումը, Հայաստանի Հանրապետության տարածքի քաղաքաշինական կադաստրի վարումն ու կադաստրային տվյալների ամփոփումը և համակարգում է քաղաքաշինական գործունեության մոնիթորինգը:

12. Ապահովում է ազգային և տարածաշրջանային (միկրոտարածաշրջանային) մակարդակների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակումը և նշված փաստաթղթերի դրույթների և առկա իրավիճակի մոնիթորինգը:

13. Ապահովում է համայնքների տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման և դրանցում փոփոխություններ կատարելու գործընթացի համակարգման աշխատանքները, աջակցում տեղական ինքնակառավարման մարմիններին համայնքների գլխավոր հատակագծերի, գոտևորման նախագծերի և զարգացման ծրագրերի մշակման հարցերում:

14. Ապահովում է քաղաքաշինական և բնական լանդշաֆտների ներդաշնակեցման ծրագրերի, տարածական պլանավորման նորմերի ու կանոնների, տարբեր գործառնական տարածքների քաղաքաշինական և լանդշաֆտային չափորոշիչների մշակման աշխատանքները:

15. Ապահովում է բնակավայրերի կայուն զարգացման ծրագրերի մշակման աշխատանքները:

16. Համագործակցում է այլ պետությունների և տարբեր միջազգային կազմակերպությունների հետ, մասնակցում է Միացյալ Ազգերի Կազմակերպության կայուն զարգացման Նոր Օրակարգի և դրանով սահմանված նպատակների, ՄԱԿ-ի Հաբիթաթի Նոր քաղաքային օրակարգի իրագործմանը, Համաշխարհային բանկի Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման, ինչպես նաև քաղաքաշինության ոլորտին առնչվող այլ ծրագրերին, կազմակերպում է Հայաստանի Հանրապետությունում Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի իրագործմանն ուղղված միջոցառումների համակարգման աշխատանքները:

17. Ապահովում է քաղաքների էկոլոգիական վիճակի բարելավմանը, շրջակա միջավայրի վրա ուրբանիզացիայի բացասական հետևանքների նվազեցմանը, կլիմայի փոփոխության հարմարվողականության բարձրացմանը ուղղված ծրագրերի մշակման աշխատանքները:

18. Մասնակցում է տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների հեռանկարային ծրագրերի կազմման աշխատանքներին, ինժեներատրանսպորտային ուղեգծերի ընտրությանը, օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնում է եզրակացություն դրանց կառուցվածքների և սպասարկման օբյեկտների տեղադրման վերաբերյալ:

19. Ապահովում է ճարտարապետության բնագավառին առնչվող ցուցահանդեսների, համաժողովների, սեմինարների, այլ միջոցառումների կազմակերպումը, քաղաքաշինական օբյեկտների լավագույն ճարտարապետական լուծումների ընտրության նպատակով կազմակերպում է ճարտարապետական մրցույթներ:

20. Քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման գործընթացում ապահովում է արտաքին փաստաթղթաշրջանառությունն իրականացնող էլեկտրոնային ինստիտուցիոնալ ցանցի համակարգումը, կազմակերպում է դրա անխափան ու անվտանգ շահագործման սպասարկումը:

21. Ապահովում է բարձր և բարձրագույն ռիսկայնության աստիճան (կատեգորիա) ունեցող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերով սահմանված սահմանային հարկայնությունը գերազանցող օբյեկտների նախագծային փաստաթղթերի պետական համալիր փորձաքննության կազմակերպումն և իրականացնումը:

22. Ապահովում է քաղաքաշինական հատուկ կարգավորման օբյեկտների զարգացման ծրագրերի մշակումը, առաջարկություններ է ներկայացնում այդ օբյեկտների տարածքների առանձնացման և դրանցում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգի վերաբերյալ:

23. Համաձայնեցնում է քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների քաղաքաշինական զարգացման և կառուցապատման ներդրումային հայեցակարգերը, կառուցապատման սխեմաները, հատուկ կարգավորման օբյեկտների սահմանների նկարագիրը, հողահատկացման վերաբերյալ առաջարկությունները, առանձին օբյեկտների կամ համալիրների ճարտարապետահատակագծային առաջադրանքները և նախագծերի ճարտարապետական մասի էսքիզային լուծումները:

24. Համակարգում է քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն, գործառական այլ համա-կարգերի տարածքային կազմակերպման, ինչպես նաև արտադրական կարողությունների, ինժեներական, տրանսպորտային, կոմունալ և սոցիալական ենթակառուցվածքների տեղաբաշխման, պատմամշակութային ու բնության հատուկ պահպանվող տարածքներ ներառող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

25. Ճարտարապետության բնագավառին առնչվող ծրագրերի շրջանակներում համագործակցում է միջազգային կազմակերպությունների հետ, մասնակցում բնակավայրերի հողերի օգտագործման և կառուցապատման համար նախատեսված այլ հողերի քաղաքաշինական սահմանափակումների և նորմերի սահմանմանը:

Իրավունքները՝

- առաջարկություններ ներկայացնել կառուցապատման թույլտվությունների տրամադրման ընթացակարգերի կատարելագործման և դրանց կիրառման մեխանիզմների վերաբերյալ,
- պաշտոնատար այլ մարմիններից ստանալ Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություններ և նյութեր,
- մասնակցել տարբեր միջգերատեսչական հանձնաժողովների նիստերին որպես ոլորտի ներկայացուցիչ կամ հանձնաժողովի քարտուղար,
- մասնակցել ճարտարապետության բնագավառին առնչվող ցուցահանդեսներին, համաժողովներին, սեմինարներին, այլ միջոցառումներին, ինչպես նաև քաղաքաշինական օբյեկտների ճարտարապետական մրցույթներին, որպես ոլորտի ներկայացուցիչ կամ հանձնաժողովի քարտուղար,
- ներկայացնել առաջարկներ ճարտարապետության բնագավառում իրենց վաստակով նշանավոր անձանց պետական պարգևների, պատվավոր կոչումների ներկայացմանը և մրցանակների շնորհմանը,
- ներկայացնել առաջարկներ հատուկ կարգավորման օբյեկտների տարածքների առանձնացման և դրանցում քաղաքաշինական գործունեության իրականացման վերաբերյալ,
- մասնակցել լանդշաֆտային քաղաքականության իրականացման աշխատանքներին, առաջարկություններ ներկայացնել տեղական և տարածքային իշխանությունների, այլ շահագրգիռ կողմերի մասնակցության ընթացակարգերի նախագծերի վերաբերյալ,
- մասնակցել միջգերատեսչական հանձնաժողովների նիստերին, տալ կարծիքներ և առաջարկներ, ներկայացնել եզրակացություններ,
- առաջարկներ ներկայացնել գոտևորման և կառուցապատման նախագծերի, քաղաքաշինական և ներդրումային հայեցակարգերի, լանդշաֆտի պահպանության, կառավարման և պլանավորման նախագծերի, քաղաքաշինական կանոնադրություն և ներդրումային ծրագրերի վերաբերյալ,
- մասնակցել ազգային և տարածաշրջանային (միկրոտարածաշրջանային) մակարդակների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքներին,
- ներկայացնել առաջարկություններ Վարչության գործառույթներին առնչվող իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու,
- կատարել քաղաքացիների ընդունելություն, հրավիրել աշխատանքային քննարկումներ, խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների և փորձագետների,
- մասնակցել ազգային և տարածաշրջանային (միկրոտարածաշրջանային) մակարդակների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքներին,
- մասնակցել քաղաքների էկոլոգիական վիճակի բարելավման, շրջակա միջավայրի վրա ուրբանիզացիայի բացասական հետևանքների նվազեցման, կլիմայի փոփոխության հարմարվողականության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման, լանդշաֆտային քաղաքականության իրականացման աշխատանքներին, քաղաքաշինական և բնական

լանդշաֆտների ներդաշնակեցման ծրագրերի, տարածական պլանավորման նորմերի ու կանոնների, տարբեր գործառնական տարածքների քաղաքաշինական և լանդշաֆտային չափորոշիչների մշակման աշխատանքներին,

- մասնակցել քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման գործընթացին,
- տրամադրել համապատասխան եզրակացություն քաղաքաշինական նպատակներով հողօգտագործման առաջարկների վերաբերյալ:

Պարտականությունները՝

- ուսումնասիրել համապատասխան ոլորտների լիազոր մարմինների կողմից ներկայացված տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների, ինչպես նաև դրանց զարգացման ծրագրերի քաղաքաշինական փաստաթղթերը և դրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել,
- մշակել քաղաքաշինական վերականգնման ու զարգացման ծրագրերի վերահսկման և մոնիթորինգի իրականացման վերաբերյալ մեխանիզմներ,
- կազմել բնագավառի զարգացումն ապահովող և գործունեությունը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների պլանավորումը,
- առաջարկություններ ներկայացնել բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատալոգների ներդրման ու կիրառման կարգի վերաբերյալ,
- ապահովել պետական համալիր փորձաքննություն իրականացնող փորձաքննական հանձնաժողովի աշխատանքները,
- մասնակցել կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկմանը, հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի և դրանց բացակայության դեպքում՝ կառուցապատման նախագծերի, նոր կառուցվող քաղաքաշինական օբյեկտների ճարտարապետաշինարարական նախագծերի վերաբերյալ,
- առաջարկություններ և դիտողություններ ներկայացնել հատուկ կարգավորման օբյեկտներում՝ քաղաքաշինական զարգացման և կառուցապատման ներդրումային հայեցակարգերի, գոտևորման նախագծերի (ներառյալ քաղաքաշինական կանոնադրության) և կառուցապատման սխեմաների, հատուկ կարգավորման օբյեկտների սահմանների նկարագրերի, հողահատկացման առաջարկությունների, առանձին օբյեկտների կամ համալիրների ճարտարապետահատակագծային առաջադրանքների և նախագծերի ճարտարապետական մասի էսքիզային լուծումների վերաբերյալ,
- իրականացնել գործարար միջավայրի բարելավմանը և ներդրումային նախաձեռնությունների խրախուսմանն ուղղված ծրագրերի մշակման աշխատանքներ, առաջարկություններ ներկայացնել կառուցապատման թույլտվությունների տրամադրման ընթացակարգերի կատարելագործման և դրանց կիրառման մեխանիզմների վերաբերյալ:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

1	Ուղղություն	Ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն
2	Ոլորտ	Ճարտարապետություն և շինարարություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ քաղաքաշինության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիտորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Փոփոխությունների կառավարում
2. Կոնֆլիկտների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում
5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում

4.Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և ազդեցությունը սահմանափակվում է համապետական մակարդակով որոշակի ոլորտով:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: